ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

“ 27” սեպտեմբերի 2012թ. № 96-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ Վ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, **կ ա ր գ ա դ ր ում ե մ.**

1.2012 թվականի հոկտեմբերի 1-ից լուծել <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգող Վալենտին Մարգարյանի հետ 2009թ. սեպտեմբերի 29-ին կնքված N13 աշխատանքային պայմանագիրը՝ նրա գործողության ժամկետը լրանալու պատճառով:

Հիմք՝ 2009թ. սեպտեմբերի 29-ին կնքված N13 աշխատանքային պայմանագիրը:

2.Ընկերության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Վ.Մարգարյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. սեպտեմբերի 27
ք. Կապան